ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 17-ի N23 արձանագրային որոշման 3-րդ կետի պահանջներով Վայոց ձորի մարզում սեռի հատկանիշով բռնության կանխարգելման ուղղությամբ 2014 թվականին իրականացված աշխատանքների վերաբերյալ

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Կատարված աշխատանքը	Ֆինանսավորման աղբյուրը
1.	Համայնքային մակարդակում վերլուծություն. գենդերային բռնությունը որպես սեռով պայմանավորված բռնություն և խտրականություն, որպես մարդու հիմնական իրավունքների և ազատության ոտնահարում	2014թ. ապրիլ-մայիս ամիսներին սեռի հատկանիշով բռնության պատճառների, ձևերի և հետևանքների վերաբերյալ զրույցներ և քննարկումներ են կազմակերպվել մարզի Գետափի, Վերնաշենի, Զառիթափի, Արփիի համայնքներում: Հանդիպմանը մասնակցել են համայնքի ուսուցիչներ, համայնքային ծառայողներ, երիտասարդ ակտիվիստներ: Միաժամանակ լսվել է մասնակիցների կարծիքը ներկայացված հարցերի վերաբերյալ:	Ֆինանսավորում չի պահանջվել
2.	Գենդերային բռնության կանխարգելման նպատակով մարզի երիտասարդության և խոցելի խմբերի շրջանում քաղաքականության իրականացում և իրազեկում	2014թ. մայիսի 1-ին մարզի երիտասարդական կենտրոնում մարզի հասարակական կազմակերպությունների և մարզային հանձնաժողովի նախաձեռնությամբ սեռի հատկանիշով բռնությանը նվիրված սեմինարին մասնակցել են բուհերի և դպրոցների սովորողներ, համայնքային ծառայողներ, ուսուցիչներ: Կատարվել է լայն իրազեկման աշխատանք, լսվել են վերլուծություններ, կարծիքներ և առաջարկություններ:	Ֆինանսավորում չի պահանջվել
3.	Մարզի տարածքում գենդերային բռնության ենթարկված անձանց բացահայտում, պահանջվող օգնության կազմակերպում	Մարզպետի շրջաբերական նամակով առաջարկվել է համայնքային մարմիններին, մասնավորապես խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներին և դպրոցների տնօրեններին պարբերաբար մարզպետին իրազեկել համայնքներում սեռի հատկանիշով բռնության ամեն մի դեպքի մասին, միաժամանակ	Ֆինանսավորում չի պահանջվել

		հանձնարարվել է մարզպետարանի համապատասխան կառույցներին անմիջապես արձագանքել նման դեպքերին	
4.	Սովորողների շրջանում գենդերային բռնության վերաբերյալ իրազեկման միջոցառումների իրականացում, առկա կարծրատիպերի հաղթահարման հնարավորությունների լուսաբանում	Մարզի ավագ դպրոցներում 2014թ.սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների ընթացքում 10-12-րդ դասարաններում մեկական ժամ տրամադրվել է սեռի հատկանիշով բռնության վերլուծությանը, առկա կարծրատիպերի հաղթահարմանը	Ֆինանսավորում չի պահանջվել

15 հունվար 2015թ.